ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԹԵՐԱՊԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

1. Մասնագետն ու «Հիլֆմանն» հոգեբանական ծառայությունը[1] (այսուհետ՝ գրասենյակ) ապահովում են այցելուի կողմից տրամադրվող տեղեկությունների և անհատական տվյալների (անուն, ազգանուն, անձնագրային տվյալներ, գրանցման հասցե) գաղտնիությունը, ինչպես նաև ծառայության մատուցման ընթացքում, այցելուի համաձայնությամբ, ձեռքբերված անձնական և վերջինիս գործունեության հետ կապված այլ ոչ հրապարակային տվյալների գաղտնիությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ՝ ա) այցելուն տալիս է իր գրավոր համաձայնությունը, բ) այցելուի կյանքին և առողջությանը լուրջ վտանգ է սպառնում, և գ) ՀՀ Օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

2. Այցելուն ապահովում է մասնագետի կողմից, ծառայության մատուցման ընթացքում, տրամադրված և վերջինիս գործունեության հետ կապված այլ ոչ հրապարակային տվյալների գաղտնիությունը բացառությամբ ՀՀ Օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

3. Խորհրդատվական և/կամ հոգեթերապևտիկ հանդիպման (այսուհետ՝ սեսիա) սկիզբն է համարվում նախապես պայմանավորված ժամը, այլ ոչ թե այցելուի կամ մասնագետի ժամանման պահը: Հետևաբար ժամանակի հաշվարկն էլ սկսվում է հենց նախապես պայմանավորված ժամից:

4. Սեսիայից ուշանալու պարագայում անհրաժեշտ է տեղեկացնել մասնագետին, քանի որ, հակառակ դեպքում, նախապես պայմանավորված ժամից 10 (տասը) րոպե անց սեսիան ինքստինքյան համարվում է բաց թողնված՝ իրենից բխող պարտավորվածություններով (տես՝ կետ 6):

5. Նախապես պայմանավորված սեսիայի օրն ու ժամը փոխելու կամ չեղարկելու համար մասնագետին անհրաժեշտ է տեղեկացնել պայմանավորվածությունից առնվազն 48 (քառասունութ) ժամ առաջ:

6. Սեսիային, առանց նախապես համաձայնեցնելու և/կամ հիմնավորված հարգելի պատճառի, չներկայանալու պարագայում անհրաժեշտ է վճարել նաև այդ բաց թողնված սեսիայի համար:

7. Չորրորդ, հինգերորդ և վեցերորդ կետերում նկարագրված կարգը կիրառելի է նաև մասնագետի նկատմամբ և ենթակա է մասնագետի և/կամ գրասենյակի կողմից փոխհատուցման:

8. Սույն տեքստի 3-7 (երեքից՝ յոթը) կետերի մասով կարող են լինել բացառություններ՝ պայմանավորված անհաղթահարելի ուժով (ֆորս մաժոր) և բխող հումանիզմի և սոցիալական պատասխանատվության սկզբունքներից:

Մասնագետ՝ ***Այցելու՝***

Արման Բեգոյան

(ստորագրություն) (ստորագրություն)

[1] «Հիլֆմանն» ՍՊԸ